Ճանաչի՛ր ինքդ քեզ

# կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 14.09.2022թ. չորեքշաբթի թիվ 37-38 (1062-1063)

## Խաչվերաց

**Խաչվերացի** տոնը, որը **Տիրոջ** փրկաբար խաչին նվիրված ամենակարեւոր տոներից է, *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին* այս տարի նշեց **սեպտեմբերի 11-ին**՝ անցած կիրակի օրը: *Խաչվերացը (Սուրբ Խաչը, Սբխեչը)* տարվա տաղավար հինգերորդ եւ վերջին տոնն է: Այն տոնվում է սեպտեմբերի **11-17**-ն ընկած ժամանակահատվածում՝ կիրակի օրը:

**Սուրբ Խաչը** տոնվում է՝ ի հիշատակ **Տիրոջ խաչափայտի**՝ պարսկական գերությունից Երուսաղեմ վերադարձի եւ *Գողգոթայում* կանգնեցման (վերացման): Այստեղից էլ տոնը կոչվում է *Խաչվերաց:*

614թ. Պարսկաստանի Խոսրով թագավորը հարձակվում է Երուսաղեմի վրա, ավերում այն, սրի քաշում ժողովրդին, մեծ թվով գերիներ տանում: Որպես անարգանք քրիստոնյաներին՝ *Սուրբ Հարության* տաճարից գերեվարվում եւ Պարսկաստան է տարվում նաեւ **Տիրոջ** *խաչափայտը:* Պարսկաստանում *խաչափայտի* զորությամբ շատերը դարձի են գալիս, մկրտվում եւ դառնում քրիստոնյա: *Խաչափայտը* գերության մեջ է մնում 14 տարի: 628թ. Բյուզանդիայի Հերակլ կայսրը քրիստոնեական մի հսկա բանակով հարձակվում է պարսիկների վրա, ազատագրում *Սուրբ Խաչը* եւ այն վերադարձնում նախկին վայրը: Որպես պատմական վկայություն՝ նշենք, որ հայ ժողովուրդը անմասն չէ *խաչի* ազատագրման գործից: Կայսրին ռազմական օժանդակություն է ցույց տվել նաեւ հունական մասի հայոց զորքը՝ Մժեժ Գնունու գլխավորությամբ:

*Խաչը* հանդիսավոր թափորով տարվում է Երուսաղեմ՝ Փոքր Ասիայի վրայով, ու բնական էր, որ այն անցնելու էր պատմական Հայաստանով: Թափորն անցնում է Կարին (Էրզրում) քաղաքով, իսկ Կարնո լեռների ստորոտներից մեկում, ուր *խաչի* դրված տեղից վճիտ աղբյուր է բխում, կառուցվում է *Խաչավանքի եկեղեցին:* Կայսրը *խաչափայտը* սրբությամբ երեք տարի Կ.Պոլսում պահելուց հետո անձամբ, կառքի մեջ ծնկաչոք, այն ձեռքերում բռնած, Երուսաղեմ է տանում եւ իր ուսի վրա դրած *Գողգոթայի* գագաթը հանելով՝ բարձրացնում է *Սուրբ Հարության* վերանորոգված տաճարում՝ ի տես բոլոր քրիստոնյաների: Այդ ժամանակից էլ վերջնականորեն հաստատվեց եւ սկսվեց մեծ հանդիսավորությամբ տոնվել *խաչի* բարձրացման հիշատակը՝ *Խաչվերացը:*

***շարունակությունը՝ էջ 7***





Խորհրդարան

## Տարկետման իրավունքի շուրջ

Աժ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում քննարկվել է *««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին»»* օրենքի նախագիծը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը:** Նրա խոսքով՝ առաջարկվող փոփոխությամբ՝ կերկարաձգվի կրթության հիմքով տարկետում ստացած քաղաքացիների բանակ զորակոչի տարիքային շեմը՝ ներկա 27 տարեկանի փոխարեն սահմանելով 28 տարեկանը: Նախարար Վահրամ Դումանյանի պարզաբանմամբ՝ այս խնդիրն առաջացել է, երբ 2017 թ.-ին *«Զինապարտության մասին»* օրենքի փոփոխությամբ՝ բոլորը պարտավոր էին ծառայել:

***շարունակությունը՝ էջ 2***

*«STARMUS VI»*

## Նամականիշի մարում

Շրջանառության մեջ է դրվել մեկ նամականիշով գեղաթերթիկ՝ նվիրված *««STARMUS VI» միջազգային փառատոնը Երեւանում»* թեմային:

Նամականիշի մարման արարողությունը տեղի է ունեցել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Այն իրականացրել են ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանը,** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը,** ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար **Ռոբերտ Խաչատրյանը,** *«STARMUS»* փառատոնի համահիմնադիր, պրոֆեսոր **Գարիկ Իսրայելյանը,** *«Հայ փոստ»* ընկերության գլխավոր գործադիր տնօրենի պաշտոնակատար **Արայիկ Աբրահամյանը** եւ ՀՀ ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ **Հովիկ Մուսայելյանը:**

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը ողջունել է միջոցառման մասնակիցներին եւ շնորհավորել՝ *«STARMUS VI»* փառատոնի կայացման առիթով: Նա նաեւ ընդգծել է՝ նամականիշը պետականության կարեւորագույն խորհրդանիշերից է. *«Այս փառատոնին նվիրված նամականիշի մարմամբ մենք նշանավորում ենք «STARMUS VI»-ի կարեւորությունն առնվազն 2022 թվականի մեր հանրային կյանքում: Վերջին մեկ շաբաթվա ընթացքում «STARMUS»-ը դարձել է մեր հանրային կյանքի անբեկանելի բաղադրիչը, որի դրական ազդեցությունը, վստահ եմ, երկար ժամանակ կզգանք մեր երկրում»:*

***շարունակությունը՝ էջ 2***

Ի գնահատումն

## Վաստակաշատ գիտնականի անունով

Երեւանի թիվ 170 ավագ դպրոցն այսուհետ կրելու է 20-րդ դարի հայազգի ականավոր գիտնական, խորհրդային ինժեներ-կոնստրուկտոր, աշխարհում առաջին լուսագնացների եւ մարսագնացների ստեղծող, ճարտարագետ **Ալեքսանդր Քեմուրջյանի** անունը:

Դպրոցի անվանակոչության հանդիսավոր արարողությանը մասնակցել են ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար **Արայիկ Հարությունյանը,** ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը,** նախարարի տեղակալ **Արթուր Մա րտիրոսյանը,** Ալեքսանդր Քեմուրջյանի որդին՝ **Վլադիմիր Քեմուրջյանը,** հայազգի առաջին տիեզերագնաց **Ջիմ Բաղյանը,** *«The Planetary Society»*-ի համահիմնադիր **Լուիս Ֆրիդմանը,** գիտության եւ արվեստի *«STARMUS»* միջազգային փառատոնի համահիմնադիր **Գարիկ Իսրայելյանը:**

***շարունակությունը՝ էջ 3***

# Նամականիշի մարում

*սկիզբը՝ էջ 1*

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն իր խոսքում ընդգծել է փառատոնի կարեւորությունը եւ դրան նվիրված նամականիշի մարումը. *«Սա, իսկապես, նոր խոսք ու նոր մոտեցում է մեր ինչպես մշակութային, այնպես էլ գիտական կյանքում: Երկուսն էլ տիեզերական սահմաններ ունեցող խորություններ են, եւ ամեն օր այս փառատոնի տարաբնույթ միջոցառումներին մասնակցելով՝ պարզապես անգերազանցելի տպավորություններ ենք ստացել: «STARMUS» գիտական եւ մշակութային փառատոնն անցկացվում է 6-րդ անգամ, բայց առաջին անգամ է այդ թեմայով նամականիշ թողարկվում. այնպես որ սա բացառիկ իրադարձություն է: Շնորհավորում եմ բոլորիս»:*

*«STARMUS»* փառատոնի հիմնադիր, պրոֆեսոր Գարիկ Իսրայելյանը կարեւորել է այն հանգամանքը, որ առաջին նամականիշը թողարկվել է հենց Հայաստանում. *«Ամբողջ աշխարհում «STARMUS»-ը համարվում է գիտական լավագույն փառատոներից մեկը, ստացել է տարբեր մրցանակներ, բայց նամականիշ երբեւէ չէր թողարկվել: Շատ զգացված եմ, որ այդ իրադարձությունը տեղի ունեցավ հենց Հայաստանում: Ես էլ եմ կարծում, որ փառատոնը ստացված է: Տեսնում եմ՝ ինչպիսի ոգեւորություն է երիտասարդների շրջանում եւ շատ ուրախ եմ այդ առիթով: Դասախոսություններ իրականացնող մեր հյուրերը եւս շատ տպավորված են ու ստանում են դրական լիցքեր»:*




ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Ռոբերտ Խաչատրյանը եւս կարեւորել է *«STARMUS VI»* փառատոնի անցկացումը՝ ընդգծելով, որ այն միավորել է գիտությունը, կրթությունը, արվեստը եւ տեխնոլոգիաները՝ նպատակ ունենալով արվեստի միջոցով հանրայնացնել գիտությունը. *«Օրեր շարունակ հնարավորություն ունեցանք մասնակցելու գիտությանը եւ արվեստին նվիրված բազմաբովանդակ միջոցառումների, իսկ Հայաստան ժամանած գրասաշրջիկները ծանոթացան մեր երկրի գիտական ու մշակութային ժառանգությանը: Դասախոսություններն ու գիտական ճամբարներն էլ, վստահաբար, նպաստեցին գիտությունն ավելի լայն շրջանակներին հասանելի դարձնելուն»:*

500 ՀՀ դրամ անվանական արժեքով գեղաթերթիկի նամականիշի վրա պատկերված է *«STARMUS VI. 50 տարի Մարսի վրա»* միջազգային փառատոնի տարբերանշանը, իսկ գեղաթերթիկի աջ հատվածում պատկերված է Մարս մոլորակը:

Գեղաթերթիկի ներքեւի հատվածում տեղադրված է *«STARMUS VI Հայաստան, Միջազգային փառատոն»* գրառումը՝ հայերեն եւ անգլերեն լեզուներով:

Նամականիշը 10.000 տպաքանակով տպագրվել է Ֆրանսիայում:

# Տարկետման իրավունքի շուրջ

*սկիզբը՝ էջ 1*



*«Երբ գործող կարգով ուսանողները ստանում էին տարկետում բակալավրում եւ մագիստրատուրայում, իսկ հետո՝ ասպիրանտուրայում, շատերը խնդրի առջեւ էին կանգնում, քանի որ մինչեւ 27 տարեկանը կամ պետք է զորակոչվել կամ բանակից ազատված լինել: Ստացվում էր, որ ասպիրանտական կրթությունը կիսատ էր մնում: 27 թիվը խորհրդային շրջանից է, երբ դպրոցը տասը տարի էր: 12-ամյա հանրակրթության համակարգով սովորողները դպրոցն ավարտում են 18-19 տարեկանում եւ բարձրագույն կրթության բոլոր երեք աստիճաններով կրթությունը շարունակելու դեպքում 27 տարեկանում չեն հասցնում ավարտել ասպիրանտուրան»,-* նշել է նախարարը՝ հավելելով, որ այսպիսով՝ առաջարկվում է կրթական տարկետում ունեցողների զորակոչի տարիքը մեկ տարով հետաձգել՝ մինչեւ 28 տարեկան, որպեսզի ուսանողը հանգիստ ասպիրանտուրան ավարտի եւ պաշտպանի որակյալ թեկնածուական:

Ըստ Վահրամ Դումանյանի՝ հաջորդ կարգավորմամբ՝ առաջարկվում է ՀՀ կառավարության որոշմամբ՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալ նաեւ բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորողին: Նրա խոսքով՝ տարկետում տրամադրելու կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ բուհերի եւ ԲՏՃՄ ուղղություններով համապատասխան մասնագիտությունների ցանկը սահմանում է Կառավարությունը՝ ելնելով տվյալ տարվա պահանջից եւ գերակայությունից: Վահրամ Դումանյանը փաստել է՝ ՀՀ պաշտպանության նախարարության հետ համաձայնեցված կիստակեցվեն եւ կտրամադրվեն տարկետման տեղերը՝ ըստ բուհերի:

*«Մինչեւ այժմ տրվել է տարկետում, սակայն պետությունը, այսպես ասած, ոչինչ հետ չի ստացել: ԲՏՃՄ ուղղություններով բուհական աշխատանքը, դասավանդումը հասկանալի պատճառներով հետաքրքիր չեն շրջանավարտների համար: Ուստի, այս ուղղությամբ եռաստիճան կրթություն մատուցող որոշ բարձրակարգ բուհերի եւ մասնագիտությունների համար առաջարկվում է տալ տարկետման հնարավորություն»,-* շեշտել է Վահրամ Դումանյանը՝ հավելելով, որ սա շատ կարեւոր օրենսդրական փոփոխություն է: Նա հավաստիացրել է՝ բազմաթիվ ծնողներ անհամբեր սպասում են այս փոփոխությանը, որպեսզի իրենց երեխաները կրթվեն ՀՀ բուհերում:

Նախագիծը հանձնաժողովի դրական եզրակացությամբ ընդգրկվել է ԱԺ լիագումար նիստերի օրակարգում:

Նույն հանձնաժողովի նիստում քննարկվել է նաեւ *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին»* օրենքում լրացումներ կատարելու նախագիծը:

Հարցը ներկայացրել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Կարեն Գիլոյանը,** որը տեղեկացրել է՝ առաջարկվում է *«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին»* 2017 թվականի նոյեմբերի 15-ի N ՀՕ-195-Ն օրենքի 21-րդ հոդվածը լրացնել նոր՝ 5.1 եւ 5.2 մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ. *«Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը, որպես օտարերկրյա քաղաքացի, ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերել որեւէ մարզաձեւի՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որեւէ տարիքային խմբի) հանդես գալու համար եւ մինչեւ 2021 թ. մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է:*

*Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու համար քաղաքացին կամ համապատասխան ֆեդերացիան մինչեւ 2022 թ. հոկտեմբերի 1-ը դիմում է սպորտի բնագավառում պետական կառավարման լիազորված մարմին, որը մեկամսյա ժամկետում պարզում է ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հոդվածի 5.1 մասին եւ միջնորդություն է ներկայացնում ՀՀ ՊՆ-ին, որը քաղաքացուն ազատում է պարտադիր զինվորական ծառայությունից՝ սպորտի բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի միջնորդությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում»:*

Նախագիծը հանձնաժողովի դրական եզրակացությամբ կընդգրկվի ԱԺ առաջիկա հերթական նիստերի օրակարգի նախագծում:

Կարեն Գիլոյանը, խոսելով այս օրենքում լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին, նշել է՝ ժամանակին հատկապես Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականում հանդես գալու համար բազմաթիվ երիտասարդներ արտերկրից հրավիրվել են հավաքական, անցկացրել են մեկ կամ երկու խաղ, իսկ հիմա այդ մարդիկ իրենց երկրում օրենքի հետ խնդիրներ ունեն, քանի որ հետախուզման մեջ են. *«Խոսքը ոչ միայն ֆուտբոլի, այլեւ ֆուտզալի Հայաստանի ազգային հավաքականի անդամների մասին է: Օրինակ՝ Վլադիմիր Սանոսյանը Հայաստանի ֆուտզալի հավաքականի առանցքային խաղացողներից է եւ պարբերաբար խնդիրներ է ունենում Ռուսաստանի այն քաղաքում, որտեղ ապրում է»:*

Կարեն Գիլոյանն ընդգծել է՝ փոփոխությունը վերաբերում է մինչեւ 2021 թվականի մայիսն այդ ցուցակում ընդգրկված մարզիկներին, քանի որ հիմա արդեն՝ Կառավարության՝ 450-Ն եւ՝ 89-Ն որոշումներով, Հայաստանի հավաքականներում ընդգրկված օտարերկրացի մարզիկները, որոնք ՀՀ քաղաքացիություն են ստացել, ազատվում են պարտադիր զինվորական ծառայությունից.

*«Պետք է այնպես անենք, որ արտերկրում ապրող մեր հայրենակիցները հնարավորությունից բացի՝ նաեւ ցանկություն ունենան համալրելու Հայաստանի հավաքականները՝ վստահ լինելով, որ օրենքի հետ կապված խնդիրներ չեն ունենա»,-* ասել է Կարեն Գիլոյանը:

Համաձայն նոր փոփոխության՝ տարկետման իրավունքից կօգտվեն նաեւ պրոֆեսիոնալ բռնցքամարտ (Բռնցքամարտի համաշխարհային խորհրդի (WBC) կա՛մ Բռնցքամարտի միջազգային ֆեդերացիայի (IBF), կա՛մ Բռնցքամարտի համաշխարհային կազմակերպության (WBO), կա՛մ Բռնցքամարտի համաշխարհային ասոցիացիայի (WBA) վարկածներով) մարզաձեւի ներկայացուցիչները՝ աշխարհի չեմպիոնի կոչում ունենալու դեպքում:

***Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

# Վաստակաշատ գիտնականի անունով

*սկիզբը՝ էջ 1*



*«Դպրոցի անվանակոչումը որքան պատվաբեր է, այնքան էլ՝ պարտավորեցնող: Մենք՝ բոլորս, պետք է քաջ գիտակցենք, որ կրթությունն ու գիտությունը մեր առաջնահերթ ուղղություններն են: Այսօր Հայաստանի Հանրապետության կառավարությունն անում է հնարավորը՝ կրթության եւ գիտության զարգացման համար: Սիրելի՛ աշակերտներ, մենք պետք է բարձր պահենք Ալեքսանդր Քեմուրջյանի եւ մեր երկրի անունը՝ գրանցելով մշակութային եւ գիտական նվաճումներ: Բարի երթ Ալեքսանդր Քեմուրջյանի անվան 170 ավագ դպրոցին»,*- ասել է ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը եւ ընդգծել, որ ներկայում Հայաստանում անցկացվող *«STARMUS»* 6-րդ գիտամշակութային փառատոնը նոր խոսք է գիտության հանրայնացման բնագավառում:

*«STARMUS» միջազգային փառատոնի համահիմնադիր Գարիկ Իսրայելյանն էլ աշակերտներին պատմել է, որ պատմության մեջ առաջին մոլորակագնացը, որը մարդիկ պատրաստել են, լուսնագնացն է եղել, որի նախագիծն իրականացրել է*



*Ալեքսանդր Քեմուրջյանը: ««Թայմ» պարբերականը «Լունախոդը» հեղափոխություն է անվանել գիտության ու տեխնոլոգիաների ոլորտում: Կարճ ժամանակ անց Մարս ուղարկվեց մի տիեզերանավ, որի մեջ դրված էր Քեմուրջյանի պատրաստած «PROP-M» փոքր ռոբոտը, որը պետք է շարժվեր Մարսի վրա ու հետազոտեր այն: Հույս ունեմ, որ այս դպրոցում աշակերտներն այնպես կսովորեն ու կաշխատեն, որ ապագայում կպատրաստեն այնպիսի ռոբոտներ, որոնք Պլուտոնի վրա կաշխատեն»,*- ասել է Իսրայելյանը:

Միջոցառման մասնակիցներին ողջունել է նաեւ Ալեքսանդր Քեմուրջյանի որդին՝ Վլադիմիր Քեմուրջյանը. *«Դպրոցը հորս անունով անվանակոչելը մեծ պատիվ է մեր ընտանիքի համար: Հայրս հորդորում էր ամբողջ կյանքում սովորել եւ շեշտում, որ կրթության ամենաառաջին քարը՝ հիմքը, պետք է դնել դպրոցում: Նա ասում էր՝ ինչպես դնեք այդ քարը, այդպես էլ կշարունակեք սովորել: Հայրս մինչեւ իր կյանքի վերջը սովորում էր, իսկ սովորել պետք է ոչ միայն մեծահասակներից, այլեւ երիտասարդներից: Հավանաբար, ոչ ոք չգիտի, սակայն երբ նախագծվում էր լուսնագնացը, հայրս իր շուրջ էր համախմբել մարդկանց, որոնց միջին տարիքը 26 էր»,*- նշել է Վ. Քեմուրջյանը:

Վլադիմիր Քեմուրջյանը բազմաբովանդակ գրքեր է նվիրել դպրոցին, իսկ ԱՄՆ-ից ժամանած գիտնական Սքոթ Ռոբերթսը՝ աստղադիտակ:

Ողջույնի խոսքերից հետո Արայիկ Հարությունյանն ու Վահրամ Դումանյանը միջոցառման մասնակիցների հետ շրջել են դպրոցի դասասենյակներում ու լաբորատորիաներում, զրուցել ուսուցիչների եւ աշակերտներ հետ, ծանոթացել ուսումնական գործընթացին եւ գործնական պարապմունքների անցկացման հետ կապված խնդիրներին:

Մշակույթ

# Նոր ցուցադրությամբ վերաբացվել է Պատմության թանգարանը

Հայաստանի պատմության թանգարանում մեկնարկում է մշտական ցուցադրության վերաբացումը՝ *«Հնագույն մարդու հետքերով. քարի դար»* խորագրով ցուցասրահի բացմամբ:

Այս կապակցությամբ թանգարանում տեղի է ունեցել մամուլի ասուլիս, որի բանախոսներն էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ալֆրեդ Քոչարյանը,** Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն **Դավիթ Պողոսյանը,** ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն **Տորք Դալալյանը,** ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող **Բորիս Գասպարյանը:**



Պատմության թանգարանի տնօրեն Դավիթ Պողոսյանի տեղեկացմամբ՝ թեեւ այս ընթացքում իրականացվել են կրթական ծրագրեր եւ առանձին ցուցադրություններ, սակայն թանգարանի մշտական ցուցադրության մեկնարկը նոր է տրվում՝ որպես հանրապետության կարեւոր մշակութային իրադարձություն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը շնորհավորել է Հայաստանի պատմության թանգարանի մշտական ցուցադրության բացման կապակցությամբ եւ նշել, որ վերաբացումը մշտապես եղել է նախարարության կարեւոր իրադարձությունների շարքում՝ օր առաջ իրականացնելու առումով:

*«Բավականին մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, թեեւ անելիքներ դեռ շատ կան: Թանգարաններն արդիականացնելը, նորարարություններ ներմուծելը մեր տեսլականն է: Եվ պետությունը պատրաստ է հնարավոր ռեսուրսների ներդրմամբ ունենալ ժամանակակից պատշաճ ցուցասրահներ՝ ներկայանալու թե՛ հայ, թե՛ օտարերկրյա այցելուներին»,*- ասել է նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը:

Հայաստանի պատմության թանգարանում ընթանում էին վերանորոգման, մասնավորապես թանգարանի ջեռուցման եւ օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքներ՝ ՀՀ կառավարության աջակցությամբ:

Առաջին անգամ բացվող *«Հնագույն մարդու հետքերով. քարի դար»* խորագրով ցուցասրահում ներկայացված է 2008 թ. *«Արենի-1»* քարանձավի պեղումներից հայտնաբերված կաշվե ոտնամանը, որը թվագրվում է Ք.ա. 3600-3500 թվականներին: Այն ցուցադրվելու է ոտնամանի համար հատուկ կայուն պայմաններ ապահովող ցուցափեղկում, որը պատրաստվել է ՀՀ կառավարության կողմից դրամաշնորհի ձեւով տրամադրվող ֆինանսական աջակցությամբ:

Ցուցադրությունը համալրվել է մի շարք նոր նմուշներով, նոր ցուցադրական կահույքով եւ նոր մոտեցմամբ: Ընդգրկված են քարեդարյան բարձրարժեք նմուշներ Հայաստանի տարբեր հնավայրերից, որոնց թվում՝ 500-300 հազար տարվա հնություն ունեցող ձեռքի հատիչ, Ք.ա. 6-րդ հազարամյակի թվագրվող քարե կացին, Ք.ա. 5-րդ հազարամյակի թվագրվող փոքրիկ կավանոթ, որի մեջ պահպանվել է օխրա ներկանյութի փոշի եւ կիրառվել է նախնադարյան մարդու կողմից, հատկապես թաղման ծեսում:

Դավիթ Պողոսյանը հատկապես կարեւորել է թանգարանում ցուցադրվող նոր գտածոների՝ որպես կրթական ռեսուրս ծառայելու հանգամանքը: Նա տեղեկացրել է, որ շարունակաբար կբացվեն նաեւ այլ ցուցասրահներ:

Նոր ցուցասրահում ներկայացվող նմուշների մասին իր գնահատականն է ներկայացրել ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Բորիս Գասպարյանը. *«Աշխարհի հնագիտությունը մի մեծ կաթսա է, որտեղ ամեն հնագետ մի կաթիլ ջուր է լցնում, եւ վերջում ձեւավորվում են այս կամ այն գիտական խնդիրների մասին տեսակետներ: Հայկական հնագիտությունն այսօր այդ ձեւաչափով փոփոխում է մարդկային հասարակության զարգացման մասին եղած համաշխարհային պատկերացումը: Ունենք եզակի ցուցանմուշներ: Մենք իսկապես հպարտանալու առիթ ունենք՝ առանց ավելորդ համեստության»:*

Ցուցադրությունը կազմակերպվել է՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հետ համագործակցությամբ: Կառույցի ներկայացուցիչը՝ փոխտնօրեն Տորք Դալալյանը, նշել է, որ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտը շատ է կարեւորում մշակութային հաստատությունների հետ համագործակցությունը:

*«Այս համատեղ աշխատանքը բացառիկ է այն առումով, որ մեր շատ գիտաշխատողներ միաժամանակ նաեւ թանգարանի աշխատակիցներ են: Դա նրանց հնարավորություն է տալիս իրենց գիտական հետազոտությունները փորձարկելու նաեւ թանգարանային ոլորտում՝ ստեղծելով կամուրջ գիտության եւ թանգարանային ոլորտի զարգացման համար, եւ այս ցուցադրությունը դրա ապացույցն է»,*- ասել է Տորք Դալալյանը:

Նշենք, որ ցուցադրությունը լայն հանրության համար բաց է սեպտեմբերի 9-ից:

# Մշակվում է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* նոր օրենքի նախագիծը

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում քննարկվել է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի նախագծի նախնական տարբերակը, որի նպատակն է կարգավորել նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտը՝ ապահովելով նոր ինստիտուցիոնալ մոտեցումներ եւ թիրախային զարգացում:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանը,** նախարարի տեղակալներ **Ժաննա Անդրեասյանը** եւ **Կարեն Թռչունյանը,** Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոնի (ՈԱԱԿ) տնօրեն **Ռուբեն Թոփչյանը,** Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) տնօրեն **Տաթեւիկ Գասպարյանը,** Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն **Արաքսիա Սվաջյանը,** ԿԳՄՍ նախարարության լիցենզավորման գործակալության, հանրակրթության, արհեստագործական եւ միջին մասնագիտական, բարձրագույն եւ հետբուհական կրթության վարչությունների եւ այլ ստորաբաժանումների ներկայացուցիչներ, նախագծի մշակման գործընթացում ներգրավված միջազգային կառույցների փորձագետներ:

Կարեւորելով քննարկումը՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ մշակվող նոր նախագիծն աշխատանքային փուլում է, դեռեւս չի հրապարակվել իրավական ակտերի e-draft.am հարթակում:

*«Հաշվի առնելով, որ մշակվող փաստաթուղթը հիմնարար օրենք է լինելու արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտի համար, մենք կարեւորում ենք, որ աշխատանքային տարբերակը լայնորեն քննարկվի շահագրգիռ բոլոր կողմերի հետ եւ ծագող բոլոր հարցերը ստանան պատասխան ու մինչեւ հրապարակվելն ունենան հիմնավորում»,*- նշել է Վահրամ Դումանյանը:

Նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նոր նախագծով առաջարկվող հիմնական մոտեցումները, նշել է, որ գործող *«Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին»* ՀՀ օրենքն ընդունվել է 2005 թվականին, որի մի շարք դրույթներ այս տարիների ընթացքում խմբագրվել եւ լրամշակվել են:

Նոր օրենքի նախագծի մշակումները Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) փորձագիտական աջակցությամբ սկսվել են մոտ երկու տարի առաջ:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ ներկայացվող նախագծի նախնական տարբերակը քննարկվել է թիրախային տարբեր խմբերի, այդ թվում՝ ՄԿՈՒ հաստատությունների տնօրենների, ոլորտի փորձագետների, սոցիալական գործընկերների, պետական այլ գերատեսչությունների, մասնավորապես՝ պետական եկամուտների կոմիտեի, ֆինանսների, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների մասնագետների մասնակցությամբ: Քննարկումներ են նախատեսվում նաեւ գործատուների հետ:

*«Ակնկալում ենք, որ վերջնական տարբերակում կունենանք նաեւ հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու առաջարկներ, որոնք կքննարկվեն միասնական փաթեթով»,*- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ ընդգծելով, որ *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի նախագիծը, որն ամբողջությամբ նոր փաստաթուղթ է, համահունչ է կրթության՝ մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի նախագծին:




## Քոլեջ. մեկ միասնական անվանում բոլոր ՄԿՈՒ հաստատություններին

Պետության քաղաքականությունը ոլորտում միասնական դարձնելու նպատակով առաջարկվում է հրաժարվել ուսումնական հաստատությունների համար գործող օրենքում կիրառվող *«քոլեջ»* եւ *«ուսումնարան»* տեսակավորված ձեւակերպումներից եւ անցում կատարել միասնական «քոլեջ» բնորոշմանը՝ նկատի ունենալով, որ այնտեղ կարող են իրականացվել ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ արհեստագործական կրթական ծրագրեր:

*«Նոր նախագիծն ինստիտուցիոնալ մեխանիզմներ է առաջարկում աշխատանքի վրա հիմնված ուսուցման եւ դուալ կրթության մոդելի համար, որը 2017 թվականից սկսած փորձարկվել է 10-ից ավելի հաստատություններում եւ առկա է բավարար փորձ: Առաջարկվող լուծումները հիմնված են դրական փորձի վրա, որոնք նախագծի շրջանառության փուլում կարող են լրամշակվե»,*- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Ըստ փոխնախարարի՝ նախագծի նոր կարգավորումները մեծացնում են մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգի ներառականությունը, որն այս ոլորտում դեռեւս լուրջ խնդիր է: Հստակեցվում են որակավորումների ոլորտային շրջանակի (ՈՈՇ) եւ կրեդիտային համակարգի ներդրման մեխանիզմները, ինչը կօգնի ճանաչելի դարձնել կրթական ծրագրերի արդյունքը՝ ապահովելով համադրելիություն եւ փոխանցելիություն կրթության այլ մակարդակներ: Ըստ այդմ՝ քննարկվող նախագիծը որոշակի առնչություններ եւ հատման կետեր ունի նաեւ հանրակրթության ու բարձրագույն կրթության ոլորտները կարգավորող օրենքների հետ:

## Ատեստավորում, տարակարգ

*«Պետք է ներդրվի հաստատություններում աշխատողների մասնագիտական զարգացման եւ վարձատրության բարելավման փոխկապակցության համակարգ: Այս խնդիրը հընթացս կլուծենք՝ ընթացիկ փոփոխություն կատարելով գործող օրենքում, նաեւ հասկանալով, որ նոր նախագծի ընդունումն ավելի երկար ժամանակ է պահանջելու»,*- նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ ՄԿՈՒ ոլորտում նույնպես նախատեսվում է դասավանդողների ատեստավորում, որի արդյունքների հիման վրա կբարձրացվեն նաեւ աշխատավարձերը:

*«Ընթացիկ եւ հրատապ մի շարք այլ հարցերի լուծումներ եւս կիրականացվեն գործող օրենքի փոփոխությամբ՝ նոր օրենքին թողնելով հիմնարար փոփոխությունները»,*- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ մասնավորապես առանձնացնելով պետական պատվերի ձեւավորման հարցը:

Քննարկման մասնակիցներին *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* օրենքի նախագծով առաջարկվող հիմնական փոփոխություններն ու նորույթները ներկայացրել են փորձագետներ **Նորա Սարգսյանը** եւ **Մարինե Հակոբյանը:**

## Փոփոխություն՝ սկսած անվանումից

Նորա Սարգսյանը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) անունից ողջունել է քննարկման մասնակիցներին՝ ընդգծելով, որ իրենք պատրաստակամ են շարունակել աջակցությունը ՄԿՈՒ ոլորտի զարգացմանը:

*«Մենք ինտենսիվ քննարկումների շարք ենք ունեցել՝ հիմնարար եւ լուրջ նախագիծ ունենալու նպատակով: Հաջողությամբ ավարտելու դեպքում ակնկալում ենք ունենալու ենք մեկ ամբողջությամբ նոր (Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին ՀՀ օրենք) եւ հարակից առնվազն 5 օրենքների փոփոխություն»,*- նշել է նա:

Փորձագետ Մարինե Հակոբյանը, ներկայացնելով նախագիծը, նշել է, որ նախագծով առաջարկվող առաջին փոփոխությունը օրենքի անվանման փոփոխությունն է՝ գործող *«Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին ՀՀ օրեն»* ձեւակերպման փոխարեն՝ առաջարկվում է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին օրենք»* տարբերակը:

Ըստ նախագծի նախնական տարբերակի՝ ընդունվելու դեպքում օրենքը կտարածվի Հայաստանի Հանրապետությունում գործող արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ու կազմակերպությունների վրա՝ անկախ նրանց կազմակերպաիրավական ձեւից ու հիմնադրից:

Սոցիալական գործընկերության կողմ համարվող եւ որոշակի կրթական ծրագիր իրականացնող կամ դրան մասնակից կազմակերպությունների նկատմամբ օրենքը կտարածվի այնքանով, որքանով կառնչվի կրթության եւ ուսուցման գործընթացին:

## Կներդրվի կրեդիտային համակարգ

Հիմնական մյուս նորույթը կրեդիտային համակարգի ներմուծումն է, որը սահմանվում է հետեւյալ կերպ. կրեդիտ՝ դասընթացի կամ ուսումնական մոդուլի, այդ թվում՝ աշխատանքի միջոցով ուսուցման ծավալի, ուսումնառության (նաեւ՝ աշխատանքային) վերջնարդյունքներ ձեռք բերելու համար ուսանողի ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր:

Դրանից ածանցվում է նաեւ կրեդիտների կուտակման եւ փոխանցման համակարգը՝ կրեդիտների համադրելիությունը, փոխանցելիությունը, ուսանողների սահուն շարժունությունն ապահովող գործողությունների ամբողջությունը:

Սահմանվում է նաեւ ուսումնական մոդուլը՝ կրթական ծրագրի բաղադրիչ հանդիսացող դասընթացի ինքնուրույն բաղկացուցիչ մաս, որի համար տրվում է կրեդիտ:

## Նորույթ՝ մասնակի որակավորում

Նախագծի հիմնական նորույթներից մեկը մասնակի որակավորումն է, որը ներկայում չկա: Եթե ուսանողը չի հաղթահարել կրթական ծրագրի տվյալ մակարդակի որակավորման համար սահմանված ամբողջական ծրագիրը, ապա նրան՝ իր դիմումի հիման վրա կարող է շնորհվել մասնակի որակավորում՝ իր ձեռք բերած ուսումնառության արդյունքների մասով: Մասնակի որակավորումը չի արգելում հետագայում շարունակել կրթությունը:

## Իրավակարգավորում՝ աշխատանքի վրա հիմնված (դուալ) կրթության համար

Տրված է աշխատանքի վրա հիմնված ուսուցման (ԱՀՈՒ) սահմանումը՝ կարողությունների, իմտությունների եւ վերջնարդյունքների ձեւավորմանը միտված կրթական ծրագրի ուսումնառության ձեւ, որն իրականացվում է իրական աշխատատեղում կամ դրան համապատասխանեցված աշխատանքային միջավայրում:

*«Այսօր ունենք մի վիճակ, երբ սոցգործընկերները, որոնք աշխատաշուկայի անմիջական մասնակիցներն են, առավելապես հանդես են գալիս՝ որպես կրթության պահանջատեր: Մենք առաջարկում ենք սկզբունքային փոփոխություն, ըստ որի, բացի պահանջատեր լինելուց, գործընկերները պետք է մասնակցեն կադրերի պլանավորման եւ պատրաստման պրոցեսին: Այսինքն՝ գործատուն պետք է կարողանա պատվեր ձեւակերպել՝ հստակ ասելով, թե ինչ է իրեն պետք: Այլապես անընդհատ ասելով, որ մենք չենք վստահում կրթության համակարգին, քանի որ այնտեղից չենք ստանում մեր ուզած որակի կադրերին, որեւէ լուծման չենք հասնի: Գործատուն եւս պետք է պատասխանատվություն ստանձնի եւ կիսի ռիսկայնությունը՝ ոչ միայն այդ մասին խոսելով, այլեւ փաստաթղթի տակ ստորագրություն եւ կնիք դնելով»,*- նշել է Մարինե Հակոբյանը:

Աշխատանքի վրա հիմնված ուսուցման բոլոր տեսակները որոշակիորեն սահմանվում եւ կազմակերպվում են իրական աշխատանքային միջավայրում: Դրանք են.

1) աշկերտություն կամ դուալ ուսուցում՝ կրթական ծրագրի մակարդակում ըստ որակավորման առանձնահատկության ուսումնառության կազմակերպման ձեւ, որն իրականացվում է ՄՈՒՀ-ում եւ գործընկեր կազմակերպությունում (այսուհետ՝ նաեւ գործատու) ուսումնառության համադրմամբ՝ ապահովելով որակավորմանն ու զբաղմունքին համապատասխան աշխատանքային հմտությունների ձեռքբերումը:

Աշակերտության կամ դուալ ուսուցման պարագայում աշխատանքի վայրում ուսումնառությունը կազմում է կրթական ծրագրի գերակշռող մաս, եւ վերջնարդյունքները ստուգվում են գործնական միջավայրում: Դուալ ուսուցման անցկացման պայմանները, աշխատանքների ծավալը եւ ժամկետները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են կողմերի (ՄՈՒՀ, գործատու եւ ուսանող) միջեւ կնքվող համագործակցության շրջանակը սահմանող երկկողմ կամ եռակողմ պայմանագրով: Ուսանողին գործատուի կողմից տրվում է վարձատրություն՝ փաստացի աշխատած ժամանակին կամ կատարված փաստացի աշխատանքին համապատասխան, իսկ այդ ժամանակահատվածը համարվում է մասնագիտական փորձառություն եւ հաշվարկվում աշխատանքային ստաժում: Աշակերտության կամ դուալ ուսուցման ընթացքում աշխատանքային հարաբերությունների մանրամասները սահմանվում են աշխատանքային օրենսգրքով:

***շարունակությունը՝ էջ 6***

Սերունդ

# Ավարտական պարգեւատրումներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում այսօր տեղի է ունեցել 2021-2022 ուսումնական տարվա հանրակրթական դպրոցների գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներին մեդալներ հանձնելու արարողությունը:

2021-2022 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից մեդալի հայտ ներկայացրած 88 սովորողներից քննությունների արդյունքում մեդալի են արժանացել 61 շրջանավարտներ: Գործող կարգի համաձայն՝ մեդալի հավակնորդները քննություն են հանձնել *«Հայոց լեզու եւ հայ գրականություն»*, *«Մաթեմատիկա»* առարկաներից: Միջոցառման ընթացքում պարգեւատրվել են նաեւ միջազգային մաթեմատիկական *«Կենգուրու»* եւ հայերենի իմացության *«Մեղու»* մրցույթների հաղթողները:



Մեդալակիրներին եւ առարկայական մրցույթների հաղթողներին շնորհավորել են ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** եւ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:**

*«Սիրելի՛ շրջանավարտներ եւ առարկայական մրցույթների հաղթողներ, այսօրվա պարգեւատրումը ձեր կյանքում առանձնահատուկ իրադարձություն է: Իմ ցանկությունն է, որ հետագայում դուք նվաճումներ ունենաք նաեւ բարձրագույն կրթության, գիտության ոլորտներում, մշտապես զգաք ձեր աշխատանքի արդյունքը՝ լինելով գնահատված,-* նշել է Վահրամ Դումանյանը եւ շարունակել,- *շնորհակալ ենք բոլորիդ ուսուցիչներին ու ծնողներին, որովհետեւ նրանք մեծ ներդրում ունեն ձեր ցուցաբերած արդյունքի գործում:*

*Կրթության ոլորտի բարեփոխումները, որոնք այսօր իրականացվում են նախարարության կողմից, մեկ նպատակ ունեն՝ ապահովել ամուր հենք, որ մենք ունենանք ավելի մրցունակ ու լավ քաղաքացի: Ապագան ձերն է, երկրի տերը դուք եք: Շնորհակալ ենք, որ ունենք ձեզ նման հրաշալի սերունդ»:*

Մեդալները հանձնելուց հետո ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն ամփոփել է հանդիսավոր արարողությունը՝ ընդգծելով, որ գերազանց առաջադիմության մեդալը 12 տարվա աշխատանքի գնահատականն է:

*«Վստահ եմ, որ շատերդ արդեն ընտրել եք մասնագիտություն եւ դառնալու եք մեր երկրի համար արժանավոր եւ պիտանի քաղաքացի»,-* դիմելով ներկաներին՝ նշել է նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը՝ հիշելով, որ ժամանակին ինքն եւս մեդալակիր է եղել:

*«Կարծում եմ՝ կրթության արժեւորման առումով՝ մեդալի նշանակությունը չի փոխվել: Մաղթում եմ, որ սա լինի ձեր հաջողությունների եւ ձեռքբերումների սկիզբը»,-* նշել է նա:

Փոխնախարարի առաջարկությամբ՝ ներկաները ծափերով ողջունել են Երեւանի թիվ 87 դպրոցի շրջանավարտ, մեդալակիր **Կարեն Սաֆարյանին,** ով մեդալի քննությունները հաջողությամբ հանձնելուց եւ բուհ ընդունվելուց անմիջապես հետո զորակոչվել էր ժամկետային զինծառայության եւ արարողությանը ներկայացել էր զինվորական համազգեստով ու հրամանատար **Գագիկ Հարությունյանի** ուղեկցությամբ: Ի դեպ, հրամանատարը 2002 թվականի մեդալակիր շրջանավարտներից է:

Շնորհավորելով *«Կենգուրու»* եւ *«Մեղու»* առարկայական մրցույթների հաղթողներին՝ Ժաննա Անդրեասյանը փաստել է, որ դրանք կարեւոր են աշակերտների մասնագիտական կողմնորոշման եւ ապագայի պլանավորման հարցերում:

*«Կարեւոր է, որ դուք կարողանաք լավագույնս ինքնադրսեւորվել մեր երկրում՝ մասնագիտական կարողությունների աճն ու անձնական երջանկությունը տեսնելով մեր հայրենիքում»,-* եզրափակել է փոխնախարարը:

Նշենք, որ *«Կենգուրու»* եւ *«Մեղու»* մրցույթները ԿԳՄՍ նախարարությունը կազմակերպում է *«Այբ»* հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Մեդալակիրների, ինչպես նաեւ *«Կենգուրու»* եւ *«Մեղու»* մրցույթների հաղթողների անվանացանկը հրապարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կայքում:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

Աշխատանքային խորհրդակցություն

# Քննարկվել են տնօրենի եւ վարչատնտեսական համակարգողի գործառույթների տարանջատմանն առնչվող հարցեր

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանն** աշխատանքային խորհրդակցության է հրավիրել ՀՀ մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի կրթության, ֆինանսական եւ իրավաբանության ոլորտային պատասխանատուներին:

Քննարկվել են 2023 թվականի հունվարից ուժի մեջ մտնող *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի փոփոխություններով պայմանավորված հանրակրթական դպրոցների կառավարման նոր մոդելին առնչվող հարցերը, մասնավորապես՝ տնօրենի եւ վարչատնտեսական համակարգողի գործառույթների տարանջատմանն ու արդյունավետ իրագործմանը վերաբերող:



Քննարկմանը մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ **Վահրամ Գասպարյանը,** ԿԶՆԱԿ-ի, ԿՏԱԿ-ի, հանրակրթության, անձնակազմի կառավարման, ֆինանսական, լիցենզավորման եւ զարգացման ծրագրերի ստորաբաժանումների ներկայացուցիչները:

*«Մինչեւ օրենքով սահմանված նոր իրավակարգավորումների կիրառումը պետք է իրականացնենք նախապատրաստական մեծ աշխատանք, որը պետք է իրականացնենք մարզերի եւ Երեւանի քաղաքապետարանի հետ համատեղ: Աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է լինելու մեխանիզմների ճիշտ պլանավորումից»,-* նշել է Ժաննա Անդրեասյանը:

Ներկայացնելով դպրոցների կառավարման նոր մոդելը՝ նախարարի տեղակալը փաստել է, որ օրենքով ամրագրված է՝ վարչատնտեսական կառավարումն առանձնացվելու է դպրոցների բովանդակային կառավարումից: Դպրոցի վարչատնտեսական կառավարման գործառույթները կարող է պատվիրակվել վարչական համակարգողին (ֆիզիկական անձի), ինչպես նաեւ իրավաբանական անձի:

*«Դպրոցի կրթության որակի ապահովման գործառույթը, որը պետության առաջնային նպատակն է, վերապահվում է տնօրենին: Առանձնացրել ենք վարչական եւ տնտեսական գործառույթները՝ տնօրենին տալով ժամանակ՝ բովանդակային գործառույթներն ավելի լավ իրականացնելու:*

*Մեր հիմնական նպատակն էր նաեւ բարձրացնել վարչատնտեսական կառավարման որակը՝ հաշվի առնելով, որ մի շարք գործառույթների կենտրոնացված իրագործումն ավելի նպատակահարմար է արդյունավետության տեսանկյունից»,-* նշել է փոխնախարարը:

Քննարկման ընթացքում նշվել է, որ, ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդելի, վարչական գործառույթներ են համարվում հաշվապահությունը, գնումների գործընթացը, սննդի եւ մաքրության կազմակերպումը, անվտանգության ապահովումը, ընթացիկ տեխնիկական սպասարկումը:

Կառավարման մոդելին առնչվող մյուս կարեւոր նորույթը, որն ամրագրված է *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքի փոփոխությամբ, դպրոցի տնօրենի նշանակումն է, որով դպրոցական խորհուրդներից հանվում է տնօրենին ընտրելու գործառույթը: Տնօրենին նշանակելու է պետական լիազոր մարմինը (ԿԳՄՍ նախարարությունը, ՀՀ մարզպետարանները եւ Երեւանի քաղաքապետարանը)՝ հիմք ընդունելով թեկնածուի ներկայացրած զարգացման ծրագիրը:

Անդրադառնալով հարցին, թե նոր օրենքի վերը նշված դրույթներն ինչպես են ուժի մեջ մտնելու եւ ինչպիսի առաջնահերթությամբ են տարածվելու դպրոցների վրա, նախարարի տեղակալը նշել է. *«Դպրոցների այն տնօրենները, որոնց մրցույթները կհայտարարվեն մինչեւ նոր օրենքի ուժի մեջ մտնելը, այսինքն՝ 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ, ընտրվելուց հետո մինչեւ իրենց պաշտոնավարման ավարտը կաշխատեն ներկայում գործող կարգավորումներով: Նոր մոդելը կգործի այն դպրոցներում, որտեղ տնօրենի թափուր տեղի մրցույթը կհայտարարվի 2023 թվականի հունվարից հետո»:*

Նախարարի տեղակալը նաեւ նշել է, որ, ըստ մարզերի, կատարվել է տվյալների ամփոփում եւ կան նախնական ամփոփ տվյալներ, թե առաջին փուլով որ դպրոցներում է ներդրվելու կառավարման նոր մոդելը: Նոր կարգով նշանակված տնօրենները հետագայում ատեստավորման ճանապարհով կարող են շարունակել պաշտոնավարումը՝ չգնալով հավաստագրման քննության: Հավաստագրման ինստիտուտը՝ որպես մուտքային պահանջ, կշարունակի գործել առաջին անգամ նշանակվող տնօրենի համար, հետեւաբար առաջին ատեստավորված տնօրենը, որը կկարողանա շարունակել աշխատանքը որպես տնօրեն՝ առանց հավաստագրվելու, կունենանք նոր մոդելի կարգավորման դրույթի ուժի մեջ մտնելուց 5 տարի անց, այսինքն՝ 2028 թվականին:

Իրականացվել է նաեւ վարչատնտեսական գործառույթներ իրականացնող աշխատակիցների քարտեզագրում, ինչպես նաեւ զուգահեռաբար ընթանում են օրենքի կիրառումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակումները:

Քննարկման մասնակիցները, ներկայացնելով իրենց դիտարկումներն ու առաջարկները, հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր համակարգի վերաբերյալ մի շարք հարցեր են ուղղել Ժաննա Անդրեասյանին:

Երեւանի եւ մարզպետարանների մասնակցությամբ քննարկումները կլինեն շարունակական:

***Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ***

Աշխարհի հետ

# Նոր չափորոշչին համահունչ



ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը** մասնակցել է Եվրոպայի խորհրդի լանդշաֆտի կոնվենցիայի ու Քաղաքաշինության կոմիտեի համատեղ մշակած` *«Բնապահպանական կրթական գործողություններ տարրական դպրոցների համար»* մանկավարժական գրքույկի` ՀՀ մարզերի դպրոցներին տրամադրելու միջոցառմանը:

Միջոցառմանը ներկա են եղել Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ **Նունե Պետրոսյանը,** ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ **Արսեն Բաղդասարյանը,** կոմիտեի այլ անդամներ եւ ՀՀ մարզպետարանների ներկայացուցիչներ:

Ժաննա Անդրեասյանը, շնորհակալություն հայտնելով համագործակցության համար, նշել է, որ գրքույկը բովանդակային առումով համահունչ է հանրակրթության նոր չափորոշչին. *«Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման աշխատանքների շրջանակում կրթական չափորոշչով արված այս հետազոտությունը շատ կարեւոր եւ օգտակար է մեր աշակերտների համար, քանի որ նրանք ձեռք են բերում նոր գիտելիքներ լանդշաֆտի վերաբերյալ:*




*Այս ուսումնական տարվա ընթացքում մեծածավալ աշխատանք է իրականացվելու` գալիք ուսումնական տարվանից նոր չափորոշիչների տեղայնացմանը նախապատրաստվելու համար: Այդ նպատակով նախատեսվում են վերապատրաստումներ, բովանդակային քննարկումներ, իսկ 2023 թվականի սեպտեմբերից նոր չափորոշիչը տեղայնացվելու է նաեւ տարրական դասարաններում:*

*Կարծում եմ` լանդշաֆտների ուսումնասիրության վերաբերյալ այս գրքույկը հատկապես օգտակար կլինի «Ես ու շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման համար` ուսուցիչների ծրագրային խնդիրները լուծելու տեսանկյունից: Գրքույկը նաեւ միջառարկայական եւ ներառարկայական կապերն է ամրապնդում, ինչը նոր չափորոշչի կարեւորագույն խնդիրներից է»:*

Նախարարի տեղակալը կարեւորել է նաեւ *«Նախնական զինվորական պատրաստություն»* առարկայի շրջանակում իրականացվող մարզառազմական ճամբարների կազմակերպումը, որոնց ընթացքում աշակերտներն ավելի լավ են ճանաչում հայրենիքը:

*«Շեշտադրելով գործնական հմտությունների զարգացումը` մենք աշակերտներին հնարավորություն ենք ընձեռում արագ կողմնորոշվել տեղանքում եւ կիրառել ձեռք բերած հմտությունները: Այս առումներով եւս գրքույկն օգտակար կլինի թե´ աշակերտների, թե´ ուսուցիչների համար»,*- նշել է Ժ. Անդրեասյանը:

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ Նունե Պետրոսյանը նշել է, որ գրքույկում դիտարկված են լանդշաֆտի հիմնախնդիրները. *«Մեր նպատակն է` խթանել աշակերտների հետաքրքրությունը լանդշաֆտի նկատմամբ: Գործողությունները վերաբերել են մի շարք թեմաների, որոնք իրականացվել են դպրոցի տարածքում եւ դրանից դուրս»,*- նշել է Նունե Պետրոսյանը:

Միջոցառման ավարտին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն ու Քաղաքաշինության եւ ճարտարապետության վարչության խորհրդական **Մարտուն Գրիգորյանը** գրքույկները հանձնել են ՀՀ մարզպետարանների ներկայացուցիչներին:

Ամփոփվել են նաեւ ՀՀ-ում Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործման աշխատանքների շրջանակում կայացած *«Լանդշաֆտի կոնվենցիա. կրթական բաղադրիչ»* ազգային աշխատաժողովի արդյունքները:

# Մշակվում է *«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին»* նոր օրենքի նախագիծը

*սկիզբը` էջ 4*

### Պրակտիկայի կազմակերպում եւ ձեռնարկատիրություն

Պրակտիկան աշխատանքի վայրում ուսումնառության փուլ է, որը լրացնում է հիմնական կրթական ծրագրի ճանաչողական եւ գործնական բաղադրիչը եւ որի ընթացքում ուսանողը առավելապես դիտարկում է աշխատանքային գործընթացը, կատարում որոշակի աշխատանքներ` ըստ սահմանված ժամանակացույցի: Այն կարող է ընդգրկել կամ չընդգրկել պայմանագիր եւ ուսանողի վճարում:

Աշխատանքի ընթացքում ուսումնառությունը կազմակերպվում է ընթացիկ աշխատանքային միջավայրում: Այն կիրառվում է առավելապես դրսեկության ձեւով կրթության կազմակերպման դեպքում եւ կարող է ապահովել աշխատանքային իրավահարաբերության մեջ գտնվող անհատի աշխատանքային գործունեության ընթացքում կրթությունը եւ որակավորումը:

Կրթական ծրագրի շրջանակում աշխատողների պարագայում ՄՈՒՀ-ը կրում է սովորողների` աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից եւ մասնագիտական հիվանդություններից ապահովագրության պարտականություն, եթե այլ բան նախատեսված չէ գործատուի հետ կնքված պայմանագրով:

Աշխատանքի վրա հիմնված ուսուցում կազմակերպելու նպատակով ՄՈՒՀ-ը օրենքով սահմանված կարգով կարող է միայնակ կամ համագործակցությամբ ստեղծել



ձեռնարկություն` իր լիցենզավորված կրթական ծրագրերի որակավորումներին եւ զբաղմունքին համապատասխան ապրանքներ արտադրելու, ծառայություններ մատուցելու կամ սպասարկում իրականացնելու համար:

### Կառավարման խորհրդի ձեւավորումը

Պետական ՄՈՒՀ-ի կառավարման խորհուրդը մշտապես գործող մարմին է, որի անդամի լիազորությունների ժամկետը հինգ տարի է, եթե նրա լիազորություններն ավելի վաղ չեն դադարել կամ դադարեցվել: Խորհրդի անվանական կազմը հաստատում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը:

Խորհուրդը բաղկացած է յոթ անդամից` հետեւյալ համամասնությամբ.

*- երկուսին առաջադրում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը` գործարարների, կրթության, գիտության, մշակույթի կամ գործատուների (ՄՈՒՀ-ի մասնագիտությունների ոլորտը սպասարկող ոլորտների) ներկայացուցիչներից,*

*- երեքին առաջադրում են սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող այն կազմակերպությունները, որոնք հանդիսանում են տվյալ ՄՈՒՀ-ի հետ առավել ակտիվ համագործակցող գործընկեր կազմակերպություններ` նախապատվություն տալով նրանց, որոնք հաստատության հետ իրականացնում են կրթական ծրագիր,*

*- երկուսին առաջադրում են տվյալ ՄՈՒՀ-ի կանոնադրությամբ լիազորված մարմինները` մանկավարժական անձնակազմի եւ ուսանողության ներկայացուցիչներից, որոնց ներկայացվող պահանջները եւ առաջադրման, փոխարինման եւ լիազորությունների դադարեցման կարգը սահմանվում է կանոնադրությամբ:*

Կառավարման խորհրդի անդամները, բացառությամբ սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպությունների առաջադրած անդամների, չեն կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել խորհրդի անդամ: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամներից առնվազն 4-ը:

Խորհրդի նախագահ չի կարող ընտրվել ՄՈՒՀ-ի ուսանողը կամ աշխատակիցը:

Խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, ով որեւէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ է, զբաղեցնում է քաղաքական պաշտոն կամ զբաղեցնում է վարչական պաշտոն տվյալ ՄՈՒՀ-ում:

Առաջարկվող փոփոխությունների եւ նոր կարգավորումների վերաբերյալ քննարկումներն ու նախագծի լրամշակման աշխատանքները կշարունակվեն:

***Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ***

Արցախ

# Բարի երթ...

Արցախում սեպտեմբերի մեկը գիտելիքի ու դպրության իր լուսեղեն կերպարին վաղուց է միահյուսել ազատության մեր աննկուն պայքարի մի նոր էջի մեկնարկի խորհուրդը:

Այլոց համար նոր ուսումնականն իր սովորական ընթացքն ունի, իսկ Արցախում այն միշտ զինվորավարի զգաստ է... Եվ հենց նման վճռականությամբ են բացվել 44-օրյա արհավիրքից հրաշքով փրկված ուսումնական հաստատությունների դռները:

Մանկավարժական եւ աշակերտական կոլեկտիվներին շնորհավորել են ԱՀ Աժ նախագահի **Արթուր Թովմասյանը**, ԱՀ պետնախարար **Արտակ Բեգլարյանը**, ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ **Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը:**

ԱՀ ԿԳՍՄ նախարար **Անահիտ Հակոբյանի** սեպտեմբերմեկյան ուղերձում մասնավորապես ասված է. *«Նախորդ ուսումնականում մենք ստիպված էինք հաղթահարել մի շարք դժվարություններ, իսկ այս ուսումնականը կրկին սկսում ենք մեծ ցավով՝ Աղավնոյի կորսված դպրոցով...*

*Ակնհայտ է, որ կրթական համակարգի խնդիրները ժամանակի հետ բազմապատկվում են՝ բոլորից պահանջելով մեծ ջանք ու եռանդ առկա մարտահրավերների դիմակայման գործում: Կրթության ուսերին են դրված երկրի ապագան ու ճակատագիրը: Վստահ եմ, որ այս զրկանքներն ու դժվարությունները մեզ ավելի կկոփեն, եւ մենք կհաղթահարենք բոլոր խոչընդոտները՝ ստեղծելով ամուր ու ճկուն կրթական համակարգ, որը կդառնա հայրենիքի ազատության եւ անվտանգության պատասխանատուն»,*- ասված է նախարար Ա.Հակոբյանի ուղերձում:

Այս ուսումնականում Արցախում նոր կրթարան է բացվել. *«Արցախի Շիրակացու ճեմարան»* գիտակրթական համալիր: Առաջին սաների ոգեւորությունը մեծ է՝ գիտելիքների ձեռքբերման նոր հնարավորության ակնկալիքով:

Ուրախությամբ տեղեկացանք, որ դպրոցական առաջին զանգը հնչել է նաեւ թշնամու հերթական սադրանքի հետեւանքով լռած Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի Գառնիկ Ավանեսյանի անվան միջնակարգ դպրոցում: Ցավալիորեն պետք է նշենք, որ միայն այս վերջին երեք տասնամյակների ընթացքում Խրամորթը չորս անգամ հայտնվել է կորստյան սպառնալիքի տակ, սակայն իր զավակների անձնուրացությամբ կրկին ոտքի է կանգնել՝ ապրելու եւ ապրեցնելու վճռականությամբ: Տեղին է հիշատակել, որ ժողովրդական ստուգաբանությամբ իր անունը գյուղը ստացել է թշնամու հարձակումներից իրեն պաշտպանող ...խրամատ բառից:

Եվ այսպես, ջերմությամբ ու սիրով լեցուն շնորհավորանքներով, գրականերաժշտական հանդեսներով է յուրաքանչյուր ուսումնական հաստատություն ընդունել իր սաներին:

ԱրՊՀ-ում սեպտեմբերը դիմավորել են հիմնանորոգված նոր մասնաշենքում: Արդեն տեղակայվել են բանասիրական եւ տնտեսագիտական ֆակուլտետները, մի շարք կենտրոններ: Առաջիկայում կահավորման եւ անհրաժեշտ սարքավորումների տեղադրումից հետո, հիմնանորոգված մասնաշենք կտեղափոխվեն նաեւ այլ ֆակուլտետներ ու ստորաբաժանումներ՝ մեզ հետ ունեցած զրույցում նշել է ռեկտոր **Արմեն Սարգսյանը:**

Չնայած այսօր էլ շարունակվող շինարարական աշխատանքներին, Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ.10 հիմնական դպրոցն իր հիմնանորոգված մասնաշենքում է կազմակերպում աշակերտների ուսուցումը: Այս դպրոցը հենց պատերազմի առաջին իսկ օրն է հայտնվել թշնամու հրթիռակոծության ու հրետակոծության թիրախում: Ավերվել էր շենքի մեծ մասը,սակայն հրադադարից հետո ուսումնական գործընթացը չի դադարել, պարապմունքներն անցել են երկհերթ...

Նոր ուսումնականին ընդառաջ, Հայ կրթական հիմնարկության միջոցներով, վերանորոգվել է Մարտունու շրջանի Կաղարծի համայնքի միջնակարգ դպրոցը, որը լուրջ վնասվել էր 44-օրյա պատերազմի ժամանակ:

Օրեր առաջ Ասկերանի եւ Մարտակերտի մեկ տասնյակից ավելի դպրոցներ համալրվել են համակարգչային տեխնիկայով: Այս գործում անհատ բարերարների շարքում է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեն:

Նոր ուսումնականի առթիվ՝ դպրոցներին ուղղված նվերները շարունակվում են, պետական հոգածությանը զուգահեռ Արցախի կրթական համակարգը շատ աջակիցներ ունի աշխարհասփյուռ հայության շրջանում: Միայն թե՝ օրը բացվի խաղաղության դրոշմով ...

***Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ***
***ք. Ստեփանակերտ,***
***մեր սեփական թղթակից***

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի *«Արարատի Ժորես Մկրտչյանի անվան հ. 1 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***սեպտեմբերի 14-ից մինչեւ սեպտեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***սեպտեմբերի 30-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Արարատի մարզի Արարատի Ժորես Մկրտչյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ Արարատի մարզ, ք. Արարատ, Շահումյան 62:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-23-82, (093) 33-80-58 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի *«Հոռոմի միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (տղաների խումբ, 4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

*- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*

*- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*

*- անձը հաստատող փաստաթուղթ,*

*- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*

*- ինքնակենսագրություն (Ձեւ 5),*

*- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

*- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,*

*- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

*- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ սեպտեմբերի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

